

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՃԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸՆ

Կարող Յոզեֆ Վոյփիլան, որ 1978 թ. հոկտեմբերին, իր պապական ընդուրությունից սկըսյալ, հայրնի է որպես Հովհաննես-Պողոս Բ, ծնվել է 1920 թ. մայիսի 18-ին, Կրակովից հիսուն կիլոմետր հեռու գտնվող Վաղովիչ քաղաքում: Նա Կարող Վոյփիլայի և Էմիլիա Կազորովսկու երկրորդ որդին էր: Մայրը մահացել է 1929 թ., ավագ եղբայր Էղմունդը բժիշկ էր, մահացել է 1932 թ., հայրը բանակի ենթասպա էր, մահացել է 1941 թ.:

Նա իր առաջին Սուրբ Հաղորդությունը ստացել է, երբ ինը փարիկան էր, իսկ դրոշմվել է 18 փարեկանում: Վաղովիչի «Մարցին Վաղովիչա» դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Կրակովի Յազիելոնյան համալսարանի թագերական ֆակուլտետում:


Լեհաստանի նացիստական օկուպացիայից հետո համալսարանը 1939 թ. փակվում է, և երիքասարդ Կարոլը հարկադրված աշխատում է քարիանքում (1940-1944 թթ.), իսկ այսուհետով՝ Սովորելի քիմիական գործարանում՝ իր ապրուստը վասրակելու և Գերմանիա աքսորվելու խոսափելու համար:

1942 թ., գիտակցենով քահանայական իր կոչումը, սկսում է դասընթացների հաճախել Կրակովի՝ զաղկնի գործող ճեմարանում, որը ղեկավարում էր Կրակովի Արքեպիսկոպոս Կարդինալ Արքամ Սովետան Սապիենսան: Կարող Վոյփիլան միաժամանակ «Ռազմողիկ Թաքրոնի» գործուն անդամներից էր: Այս թաքրոնը ևս գտնվնի էր գործում:

Երկրորդ աշխարհամարդի ավարտից հետո շարունակում է ուսումնառությունը Կրակովի ճեմարանում, անմիջապես վերջինիս վերաբացվելուց հետո, ինչպես նաև Յազիելոնյան համալսարանի ասդրվածարանական ֆակուլտետում մինչ իր քահանայական ճեմարանությունը, որը գրեղի ունեցավ Կրակովում 1946 թ. նոյեմբերի 1-ին:

Կարճ ժամանակ անց Կարդինալ Արքամ Սովետան Սապիենսան նրան ուղարկում է Հռոմ, որ աշխատում է ծագումով ֆրանսիացի դոմինիկյան միարան Գարիգու Լեգրանի ղեկավարության ներքո: 1948 թ. պաշտպանում է իր ղոկապրական թեզը «Հավաքրքը Սուրբ Հովհաննես խաչեցյալ աշխարհանքներում» թեմայով: Այդ փարիներին, արձակուրդների ընթացքում, ապագա քահանայապետը քահանայագործում էր Ֆրանցիայից, Բելգիայից և Դունայիայից գաղթած լեհերի միջավայրում:

1948 թ. վերադառնում է Լեհաստան և նշանակվում Կրակովի փարքեր ծիսերի, ինչպես նաև համալսարանական ուսանողության հոգևոր հովիվ: 1951 թ. վերսկսում է իր դասընթացները փիլիսոփայության և ասդրվածարանության բնագավառներում: 1953 թ. Լյուրիինի կաթոլիկ համալսարանում պաշտպանում է «Մաքս Շելերի բարոյագիրական համակարգի հիման վրա Կաթոլիկ բարոյագիրություն հիմնելու հնարավորության մասին» թեմայով թեզը: Այնուհետև դառնում է բարոյագիրական ասդրվածարանության և սոցիալական բարոյագիրության պրոֆեսոր Կրակովի համալսարանում և Լյուրիինի Ասդրվածարանական ֆակուլտետում:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎԿԱՍՏԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԸ



ԿԱՏՈՎԻԿԱՆՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ՅՈՒՆԿԱԳԻՐԻ ԱՏՈՐԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2000 թ.



Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԲԱՐԻ ԻՉՍԱՍ ՍՈՒՐԲ ՍԵՊԱՆԻՆ
ԻՐ ԽՈՍՏԱՐՅՈՒՄՆ Է ԲԵՐՈՒՄ ՅՈՎՔԱՆԱՆԵԱ-ՊՈՂՈՎՈՒ Բ ՊԱՄՊԸ.
25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2001 թ.

1958 թ. հուլիսի 4-ին Պիտո ԺԲ Պապի կողմից նշանակվում է Կրակովի Օգնական Եպիսկոպոս, և Բազիկա Վրքեալիսկոպոսի ծեռամբ եպիսկոպոս օծվում նույն թվականի սեպտեմբերի 28-ին Կրակովում Վավելի Մայր Տաճարում:

1964 թ. հունվարի 13-ին Պիտո ԺԲ Պապի կողմից նշանակվում է Կրակովի Վրքեալիսկոպոս: 1967 թ. հունիսի 26-ին Պիտո ԺԲ Պապի կողմից սրբանում է կարդինալի ասքիճան:

Կարդիկանի Բ ժողովին մասնակցելուց բացի, որպես նա կարևոր ներդրում ունեցավ Սահմանադրության (Gaudium et spes.) սրբեղման գործում, Կարդինալ Վոյտիլան մասնակցել է նաև Եպիսկոպոսների Սինոդի բոլոր ժողովներին:

1978 թ. հոկտեմբերի 16-ին ընդրվում է Հռոմի Պապ և Սրբազն Քահանայապետ: Այդ օրվանից ի վեր Հովհաննես-Պողոս Բ Պապը իրականացրել է 104 հովվապետական ուղևորություններ Խրալիայից դուրս և 146՝ Խրալիայում: Որպես Հռոմի Եպիսկոպոս, նա այցելել է 333 ծխերից 317-ը:

Որպես Հռոմի Պապ, Հռոմեական Եկեղեցու հավաքացյալներին է հղել 14 շրջաբերականներ, 15 առաքելական պարզամներ և 45 թղթեր: Հրադարակել է նաև 5 գիրք՝ «Անցնելով Հույսի Շեմը» (1994 թ. հոկտեմբեր), «Շնորհ և Խորհուրդ. Խմ քահանայական ձեռնադրության հիմնամյա Հորեցանին» (1996 թ. նոյեմբեր), «Հռոմեական Տրիպոլիս - Խորհրդածություններ» բանասբեղծությունների ժողովածու (2003 թ. մարտ), «Վեր կաց, եկ-զնանք մեր ճանապարհով» (2004 թ. մայիս), «Վիշտություն և նույնություն» (2005 թ.):

Հովհաննես-Պողոս Բ Պապը իր հովվապետության շրջանում նախագահել է երանագործման 147 արարողություններ (1.338 անձինք երանելի նև հոչակվել) և սրբադասման 51 արարողություններ (482 սրբեր): Նա դեկապարել է: 9 կոնսիստորիաներ, որպես հոչակել է: 231 կարդինալներ (ինչպես նաև մեկ զաղպնի կարդինալ): Հրավիրել է նաև Կարդինալների Կոլեգիայի 6 նիստեր:

1978 թ. մինչև 2005 թ. Հովհաննես-Պողոս Բ Պապը նախագահել է Եպիսկոպոսական 15 ժողովներ՝ 6 սովորական, 1 արքակարգ և 8 հափուկ:

Հռոմի Պապերից և ոչ մեկը իր հովվապետության ընթացքում չի հանդիպել այնքան մարդկանց, որքան Հովհաննես-Պողոս Բ Պապը: Ավելի քան 17.600.000 ուխտավորներ են արժանացել չորեքշաբթի օրերին Վրբող ընդունելություններին (ավելի քան 1.160 ընդունելություն), շիազված հափուկ ընդունելություններն ու կրոնական արարողությունները (ավելի քան 8 միլիոն ուխտավորներ էին ներկա Քրիստոն Ծննդյան 2000-ամյա հորեւանին), ինչպես նաև միլիոնավոր հավաքացյալներ են հանդիպել Հովհաննես-Պողոս Բ Պապին իր հովվապետական այցերի ժամանակ Խրալիայում և ամբողջ աշխարհում: Արժանահիշարժակ են նաև 38 պաշտոնական այցերի ընթացքում Վենետիկ ունեցած հանդիպումները կառավարության անդամների հետ, ինչպես նաև 738 ընդունելությունները՝ Վրված պետությունների դեկապարներին, և 246 ընդունելությունները՝ Վարչապետներին:

Հռոմի Սրբազն Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապը ի Տեր հանգյավ 2005 թ. ապրիլի 3-ին: